

## Տ. ՂԵՎՈՆԴ ՔԱՀԱՆԱ ԳԱՓՈՅԱՆ

(ավազանի անունը՝ Արարատ)

Ծնվել է 1973 թ. ապրիլի 14-ին, Արարատի մարզի Ավշար գյուղում:

Նախնական կրթությունը ստացել է տեղի միջնակարգ դպրոցում (1979-1990 թթ.): Միջնակարգ կրթության հետ համատեղ 1985-1990 թթ. ընդունվել և ավարտել է Արարատի երաժշտական արվեստի դպրոցը:

1990-1997 թթ. ուսանել և ավարտել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը:

1996 թ. Սուրբ Ստեփաննոսի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1997-1999 թթ. աշխատել է ՔԴ-ՔԿ-ում որպես «Քրիստոնեայ Հայաստան» թերթի լրագրող՝ միաժամանակ լինելով տեխնական բաժնի պատասխանատու:

1999 թ. հունիսի 15-ին ամուսնացել է և նույն ամսի 25-ին զորակոչվել Ազգային բանակ և այժմ ծառայում է Արմավիրի Մոտոհրաձգային ուսումնական բրիգադում որպես հոգևոր խորհրդական:

2000 թ. հունվարի 31-ին պաշտպանել է «Սուրբ Էջմիածնի միաբանական գերեզմանատան արձանագրությունների վերծանությունը» թեմայով ավարտաճառը՝ արժանանալով «քաջալավ» գնահատականի:

Զինծառայության ժամկետը լրանալուց հետո հոգևոր ծառայության պետք է անցնի Արագածոտնի թեմում՝ որպես հոգևոր հովիվ: